ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հունիսի 2022 թվականի N 111 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾ ՍԵՊԱՍԱՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-081-0017-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 0.085694 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Հովսեփ Աշոտի Գասպարյանը դիմել է (դիմումը մուտքագրված Աշոցքի համայնքապետարանում 2022 թականի հունիսի 21-ին, մտից 600) Աշոցքի համայնքի ղեկավարին 0.085694 հա մակերեսով հողամասի և հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված բնակելի տան, բնակելի տանը կից կառուցված բնակելի նշանակության շինությունների նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչելու խնդրանքով:

Ղեկավարվելով՝ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ N 1328-Ն որոշման 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով և 50-րդ կետով, հաշվի առնելով, որ դրանք կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և որ հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել քաղաքացի Հովսեփ Աշոտի Գասպարյանի /ծնված՝ 1984 թվականի հունվարի 2-ին/ սեփականության իրավունքը 0.085694 հա մակերեսով հողամասի և հողամասում մինչև 2001թվականի մայիսի 15-ը կառուցված բնակելի տան, բնակելի տանը կից կառուցված բնակելի նշանակության շինությունների նկատմամբ:

2. քաղաքացի Հովսեփ Աշոտի Գասպարյանի սեփականության իրավունքով պատկանող, գյուղ Մեծ Սեպասար, 5-րդ փողոց, բնակելի տուն 2 հասցեում գտնվող 08-081-0017-0007 կադաստրային ծածկագրով բնակելի տանը տալ հասցե՝ Հայաստանի հանրապետություն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Մեծ Սեպասար, 5-րդ փողոց, բնակելի տուն 2:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2022 թվականի հունիսի 21
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀայաստանիՀանրապետության ՇիրակիմարզիԱշոցքհամայնք
ՀՀ, Շիրակիմարզ, գ.Աշոցք, 0245 2-14-82, ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունիսի 2022 թվականի N 112-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ/ԲՆԱԿԱՎԱՅՐ ԳՈԳՀՈՎԻՏ/ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-0034-0022-0039 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.54723 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱԳԻԿ ՌԱԴԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապեթության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 12-ի N 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 6-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ և 6-րդ ենթակետերը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 10-ի թիվ 55-Ա որոշումը և նկատի ունենալով, որ քաղաքացի Գագիկ Ռադիկի Մխիթարյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Գոգհովիտ բնակավարի տարածքում գտնվող 08-034-0022-0036 կադաստրային ծածկագրով 1.06881 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասին հարակից /հասցեն՝ մարզ Շիրակ, համայնք Աշոցք, գյուղ Գոգհովիտ, 11-րդ փողոց, 8/1 հողամաս, Վկայական N 12052022-08-0034/ համայնքի սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության 08-034-0022-0039 կադաստրային ծածկագրով 0.54723 հեկտար մակերեսով հողամասը /հասցեն՝ մարզ Շիրակ, համայնք Աշոցք, գյուղ Գոգհովիտ, 11-րդ փողոց, 8/2 հողամաս, Վկայական՝ N 170520222-08-0010/ հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել հրապարակային սակարկությունների միջոցով, հաշվի առնելով քաղաքացի Գագիկ Ռադիկի Մխիթարյանին 2022 թվականի հունիսի 01-ի դիմումը՝ իր

սեփականությունը հանդիսացող հողամասում կազմակերպվող քարի վերամշակման արտադրամասի կառուցապատման նախագծային լուծումների ապահովման համար հողամասի ընդլայնման հրատապ անհրաժեշտության մասին, *որոշում եմ.*

1. Հաշվի առնելով, որ քաղաքացի Գագիկ Ռադիկի Մխիթարյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Գոգհովիտ բնակավարի տարածքում գտնվող 08-034-0022-0036 կադաստրային ծածկագրով 1.06881 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասին /հասցեն՝ մարզ Շիրակ, համայնք Աշոցք, գյուղ Գոգհովիտ, 11-րդ փողոց, 8/1 հողամաս, Վկայական N 12052022-08-0034/ հարակից համայնքի սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության 08-034-0022-0039 կադաստրային ծածկագրով **0.54723** հեկտար մակերեսով հողամասը /հասցեն՝ մարզ Շիրակ, համայնք Աշոցք, գյուղ Գոգհովիտ, 11-րդ փողոց, 8/2 հողամաս, Վկայական՝ N 170520222-08-0010/ որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 6-րդ ենթակետերով սահմանված չափորոշիչների հիմքով, այդ հողամասը ուղղակի կարգով, տվյալ հողամասի կադաստրային գնի չափով՝ 1 (մեկ) քառակուսի մետրը՝ **142** (մեկ հարյուր քսաներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, **0.54723** հեկտար հողամասի համար **777 070** /յոթ հարյուր յոթանասունյոթ հազար յոթանասուն/ Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել քաղաքացի Գագիկ Ռադիկի Մխիթարյանին (անձնագիր՝ AT 0399970, տրված՝ 27.02.2020թ, 012-ի կողմից, բնակության հասցե քաղաք Երևան, Վ. Ռուստամյան թողոց, տուն 30) և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

2. Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ քաղաքացու միջոցներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2022թ. հունիսի «22»
գ.Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հունիսի 2022 թվականի N 113 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏԱԿ ՅՈՒՐԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿՍՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ՊԱՐԻՍՊԻ, ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդված 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 39-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 10-ի թիվ 49-Ա որոշումը և հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի Արտակ Յուրիկի Սահակյանը, իր 2022 թվականի մայիսի 30-ի դիմումի համաձայն, ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-109-0001-0007 կադաստրային ծածկագրով 0.071837 հեկտար հողամասի վրա ինքնակամ կառուցված անասնաշենքի շինության, պարիսպի և համապատասխան հողամասի ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը և սահմանված կարգով ու ժամկետում ամբողջությամբ կատարել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 2022 թվականի մայիսի 2–ի թիվ 76-Ա որոշմամբ օրինական ճանաչված շինության և համապատասխան հողամասի համար սահմանված վճարումները և տվյալ գույքային միավորի նկատմամբ համայնքի անվամբ իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները, **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման

գործառնական նշանակության 08-109-0001-0007 կադաստրային ծածկագրով 0.071837 հեկտար հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված, օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված 8,11 քառակուսի մետր մակերեսով պարիսպը ու 131.37 քառակուսի մետր արտաքին մակերեսով անասնաշենքի շինությունը (վկայական N 13052022-08-0037 հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Վարդաղբյուր, Գյումրու խճուղի, անասնաշենք 11) գնման նախապատվության իրավունքով, ուղղակի կարգով **251530 (երկու հարյուր հիսունմեկ հազար հինգ հարյուր երեսուն) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով,** վաճառել կառուցապատողին, քաղաքացի՝ Արտակ Յուրիկի Սահակյանին (հետագայում քաղաքացի) (նույնականացման քարտ՝ 006632111, տրված՝ 23.12.2015թ, 064-ի կողմից, բնակության հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Շիրակացի 4-րդ թաղամաս, 4-րդ շենք, 6-րդ մասնաշենք, բնակարան 21) և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

2. Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ քաղաքացու միջոցներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2022 թվականի հունիսի 23
գյուղ Աշոցք